

թաղեց Սաղիմի մէջ, որ լաւ կրնար ըլլալ բնակելի աշխարհին կեդրոնը (Տե՛ս էջ 49—51):

Աշխարհի կեդրոնի ծանօթութիւնը կերպով մը յայտնի է այն ենթադրութեամբ թէ Ազամ նոյն տեղը թաղուած էր, կամ վերջապէս անոր մօտ. աւանդութիւնը կ'ըսէ թէ թաղուած էր ան Գողգոթայի ժայռին տակը: Մահմետականներն ալ ունին միւլանոյն աւանդութիւնը թէ ան թաղուած է երկրին մէջտեղը: Էլ Մասուտի իր «Ոսկի մարգագետիններ» և «Գոհարներու հանքեր» գրքին մէջ կ'ըսէ. «Աստուած ըսաւ Սեմին. — Ո՛վ Սեմ, պիտի պահպանեմ միշտ, և պահպան պիտի դնեմ Ազամին մարմնոյն: Սեմ կը թաղէ Ազամի մարմինը երկրի մէջտեղը և Ղամէքը կը կարգէ իրր պահպան: Այս պարագային տակ Երուսաղէմ երկրի կեդրոնը չէ, վասնզի մահմետականները կը հաւատան թէ Ազամ թաղուած է Մէքքէի մօտ, El-Khayt մզկիթին մէջ»: Այս երկու աւանդութիւնները կը թուին ցոյց տալ իրականութիւն մը թէ Ազամի մարմնոյն ենթադրեալ ներկայութիւնը կը յայտնէ տեղւոյն նկարագիրը:

Ս. Եփրեմի խօսքերը՝ որ քրիստոնեայ եկեղեցիին մէջ ցոյց կուտայ նոյն աւանդութիւնը, Դ. դարու հրնութիւն ունին: Վերջին ժամանակի վկայութիւնները բազմաթիւ են: Արգուլֆ Երուսաղէմ կ'այցելէ 700ին և «կը դիտէ բարձր սիւն մը՝ Սուրբ Տեղեաց հիւսիսային կողմը, քաղաքին մէջտեղը, որ ամրան արեւադարձին կէս օրին շուք չի ձգեր, ցոյց կուտայ թէ հոն երկրին կեդրոնն է:» Ոմանք ալ նոյն բառերէն կ'ենթադրեն թէ նոյն սիւնը քաղաքին մէջտեղն էր, և ոչ թէ Ս. Գերեզմանի եկեղեցիին մէջ: Բայց Միջին դարու հեղինակներուն նկարագրութիւնները խիստ